ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հունիսի 2015թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.6, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.15, ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.45 ԵՎ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.16 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Շինարարների փողոցի հ.6, Շինարարների փողոցի հ.15, Մարգարյան փողոցի հ.45 և Սիսակյան փողոցի հ.16 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքերում առկա գույքային միավորների հասցեների տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանել 500 ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.6, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.15, ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.45 ԵՎ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.16 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շինարարների փողոցի հ.6, Շինարարների փողոցի հ.15, Մարգարյան փողոցի հ.45 և Սիսակյան փողոցի հ.16 հասցեներում Երևանի քաղաքապետարանի պատվերով «Ինժգարանտ» ՍՊԸ-ի, «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի և «ԳԵՎՄԻԿ» ՍՊԸ-ի կողմից, կողմերի միջև կնքված բնակարանների և հասարակական տարածքի գնման պայմանագրերի համաձայն՝ կառուցվում են բազմաբնակարան բնակելի շենքեր:

Վերոնշյալ պայմանագրերի համաձայն՝ շինարարության ավարտից հետո շենքերում կառուցվող բնակարանների հիմնական մասը հանձնվելու են Երևան համայնքին՝ որպես սեփականություն: Նշված բնակարանները նախատեսվում է տրամադրել Երևան քաղաքում գտնվող 4-րդ կարգի քանդման ենթակա վթարային շենքում բնակվող ընտանիքների վերաբնակեցման գործընթացը կազմակերպելու համար: Նշված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջանում շենքերում առկա յուրաքանչյուր գույքային միավորի մասով տրամադրել առանձին փոստային առաքումների հասցեներ:

Հասցեների տրամադրման գործառույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակներում, որի 49-րդ հոդվածի համաձայն՝ հասցեի տրամադրման ծառայությունը վճարովի է: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Երևանի ավագանին սահմանում է տեղական հարկեր և տուրքեր, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց սահմանում է վճարներ:

Հարկ է նշել նաև, որ Երևան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.96-Ա որոշմամբ՝ համանման դեպքում Մարգարյան փողոցի հ.37 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքում առկա գույքային միավորների հասցեների տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանվել է 500 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասցեները տրամադրվելու են այն գույքային միավորներին, որոնք սեփականության իրավունքով հանձնվելու են Երևան համայնքին՝ Երևան քաղաքում գտնվող 4-րդ կարգի քանդման ենթակա վթարային շենքում բնակվող ընտանիքների վերաբնակեցման գործընթացը կազմակերպելու համար, ապա անհրաժեշտություն է առաջացել կիրառել նույն մոտեցումը և քննարկվող շենքերում առկա գույքային միավորներին տրամադրվող հասցեների դիմաց գանձվող վճարը սահմանել մեկ միավոր գույքի համար 500 ՀՀ դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.6, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.15, ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.45 ԵՎ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.16 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Շինարարների փողոցի հ.6, Շինարարների փողոցի հ.15, Մարգարյան փողոցի հ.45 և Սիսակյան փողոցի հ.16 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հասցեների տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.6, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ Հ.15, ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.45 ԵՎ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.16 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Շինարարների փողոցի հ.6, Շինարարների փողոցի հ.15, Մարգարյան փողոցի հ.45 և Սիսակյան փողոցի հ.16 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հասցեների տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում էական եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ